ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(Առարկա)

ԹԵՄԱ-Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասընթացին

Կազմեց՝ Ասյա Հովակիմյան Արամի (անուն, ազգանուն, հայրանուն)

<<Ագարակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Դպրոցականների արժեքային կողմնորոշման ձևավորումը 5

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հետազոտություն մայրենիի դասընթացին.....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պայմաններում անհատականության ձևավորումը պահանջում է նոր մանկավարժական մոտեցումներ՝ պայմանավորված տեղեկատվական տարածքում արժեքային փոփոխությամբ: Նոր պայմաններում անհատից պահանջվում է իրականության նկատմամբ քննադատական վերաբերմունք, հստակ դիրքորոշումներ, կայուն արժեքային համակարգ, անձնային ինքնորոշում:

Հոգեբանական և մանկավարժական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ արժեքային կողմնորոշման ձևավորման խնդրի դասական մոտեցումներն այսօր բավարար չեն շրջակա աշխարհի նկատմամբ կայուն արժեքային վերաբերմունքի ձևավորման համար, ուստի անհրաժեշտ են նոր ուսումնասիրություններ, որոնք կբացահայտեն տեղեկատվական տիրույթում կայուն արժեքների պահպանման և փոխանցման ուղիները, ինչով և պայմանավորված է թեմայի **արդիականությունը:**

Ժամանակակից դպրոցականների գիտակցության մեջ տեղի ունեցող արմատական վերափոխումները, տեղեկատվական տեխնոլոգիաների հակասական ազդեցությունը, կյանքի ինտենսիվ ռիթմերն ավելացրել են գիտելիքի նկատմամբ պահանջները, առաջադրել են նոր ՏՀՏ կարողությունների և հմտությունների ներմուծման անհրաժեշտություն, որտեղ էական տեղ է զբաղեցնում դպրոցականների արժեքային համակարգի ձևավորումը՝ ձգտումներ, դրդապատճառներ, վերաբերմունք, հետաքրքրություններ, կարիքներ, ցանկություններ, կյանքի նպատակներ, ուղղված համամարդկային ամենակարևոր հումանիստական արժեքներին: Խնդրի լուծման նոր ուղիներ գտնելու արդի պահանջը մեզ մղում է առավել խորը դիտարկելու հասարակություն և անհատ հարաբերություններում արժեքների ազդեցությունը, երեխայի դաստիարակության գործընթացում անհրաժեշտ գաղափարների և արժեքային հիմքերի փոխանցումը դեռևս նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքից: Սերը դեպի գիրքը և գրական ստեղծագործությունները անհրաժեշտ է սերմանել երեխայի մեջ դեռ փոքր հասակից՝ միաժամանակ հաշվի առնելով երեխայի հետաքրքրությունները՝

անհրաժեշտ մասնակցություն և ներգրավվածություն ապահովելու համար, ինչն առավել արդյունավետ է իրականացվում մայրենիի դասընթացին:

Աշխատանքի **նպատակն է** սովորողների արժեքային համակարգի ուսումնասիրումը մայրենիի դասավանդման ընթացքում:

Խնդիրներն են՝

Ձևավորել դպրոցականների արժեքային կողմնորոշումը

Հետազոտել դպրոցականների արժեքային համակարգը:

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ

Անգնահատելի է մայրենիի դերը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխայի դաստիարակության գործում: Այս տարիքում հատկապես մեծ ազդեցություն ունի հուզազգայական ընկալումը՝ կապված հերոսների անձի հետ, ուշադրության ընկալումը՝ դեպի շրջապատող մարդկանց տրամադրություն: Մայրենիում տեղ գտած ստեղծագործությունները նպաստում են յուրաքանչյուր երեխայի մոտ հումանիստական որակների ձևավորմանը և առաջ բերում ցանկության ակտիվություն՝ ներգրավվելու իր շուրջը տեղի ունեցող գործընթացներին: Արդյունքում երեխայի մոտ դաստիարակվում է բարություն, ազնվություն, սկզբունքայնություն և քաղաքացիություն: Երեխայի ներաշխարհը զարգանում է գրքային աշխարհի հետ միաձուլման արդյունքում, որտեղ միահյուսվում են փոքրիկ և մեծ պատմությունն, ընդհանուր և անձնային հույզերը: Գեղարվեստական լեզուն օգնում է երեխային ընկալելու մայրենի լեզվի բոլոր հնչերանգները, նպաստում է շրջակա աշխարհի ընկալման էսթետիկ դաստիարակության գործընթացին, օգնում է կուտակել և կոնսոլիդացնել բարոյական պատկերացումներ և այս ամենը միասին ձևավորում են երեխայի արժեքային համակարգը [Զրբաշյան 2016, էջ 330]: Ուստի դպրոցական տարիքը արժեքային կողմնորոշումների ինտենսիվ ձևավորման շրջան է, որն ազդում է բնավորության և անհատականության վրա: Արժեքային կողմնորոշումը կարևոր է ստեղծագործ ակտիվ անձի ձևավորման համար, ով ունակ է վերաիմաստավորելու հնացած գիտելիքները, հրաժարվելու կարծրատիպային վարքային ձևերից՝ մշտապես ինքնակատարելագործման նպատակով:

Փիլիսոփայական առումով՝ արժեքային կողմնորոշիչներ համարվում են անձի ներքին կառուցվածքի իրադարձությունների կարևորագույն տարրերը, անհատի ամրագրված կենսափորձը, փորձառությունները (Օ.Գ. Դրոբնիցկի, Վ.Պ. Տուգարինով, Ս.Ֆ. Անիսիմով, Ա.Ի. Տիտարենկոն և ուրիշներ) [Эрдниев 1996, стр. 126]:

Սոցիոլոգիական առումով առավելապես շեշտադրելի են սոցիալական արժեքները՝ մարդ –հասարակություն փոխազդեցության համատեքստում (Մ. Վեբեր, Վ.Տ. Լիսովսկի, Լ.Ա. Վերբիցկայա, Տ.Ն. Մալկովսկայա և այլն) [Эрдниев 1996, стр. 126]:

Հոգեբանության մեջ առավելապես տարբերակելի են անհատի գաղափարական, քաղաքական, գնահատականների էթիկական, գեղագիտական և այլ հիմքերը շրջապատող իրականության նկատմամբ (Ի. Ս. Կոն, Ի.Վ. Դուբրովինա, Ի.Ս. Յակիմանսկայա և այլք) [Эрдниев 1996, стр. 126]: Մանկավարժության մեջ արժեքային կողմնորոշումները որոշվում են օբյեկտի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքով՝ հասարակական արժեքներ՝ արտահայտված գիտակցության մեջ և փորձը որպես կարիք, որը պայմանավորում է ներկա վարքագիծը և ապագայի պլանները [Шемшурина 2011, стр 45].

Դպրոցականների արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրներից է տեղեկատվական տիրույթում և բազմաէթնիկ միջավայրում, որը թույլ է տալիս ապահովել վարքագիծ՝ ընդունված էթիկական սկզբունքների համաձայն, գիտելիքները փոխկապակցել բարոյական չափանիշներին, ստանձնել հասարակության կողմից ընդունելի սոցիալական դերեր և միջանձնային հարաբերություններ, ընդունել ընդհանուր մշակութային արժեքներ (ընտանիք, ընկերություն, բնություն, հայրենիք), բարոյական արժեքներ (բարություն, արդարություն, սեր և այլն):

Արժեքային համակարգի ձևավորումը կապված է անհատի արժեքային կողմնորոշումներին՝ համաձայն որի ձևավորվում են նպատակները, իմաստավորվում է գործունեությունը, գտնվում են հասարակայնորեն ընդունելի լուծումներ: Կայուն արժեքների հիման վրա տեղի է ունենում անձնային ինքնորոշում, որտեղ էական դեր են խաղում օրինակ մայրենիի դասագրքում տեղ գտած՝ «Անտառի բնակիչները», «Առակի ծնունդը», «Ամենից լավ տունը» և մի շարք այլ ստեղծագործություններ, որի շնորհիվ սովորողների մոտ գիտելիքը դառնում է արժեք և արժեքը նպատակ՝ ձևավորելով լայն մտահորիզոն, աշխարհայացք, փոխանցելով գիտելիքներ, հարստացնելով կենսափորձը խաղում կրթական ներուժը, մշակելով բնավորության դրական գծեր՝ ազնվություն, հայրենասիրություն, աշխատասիրություն և այլն[Шемшурина 2011, стр 45]: Գրքի միջոցով կոփվում է երեխայի կամքը, հարստանում երևակայությունը, մշակվում էսթետիկական ճաշակ, գեղեցիկի զգացում [Ջրբաշյան 2016, էջ 330]:

Վերոնշյալը սահմանում է նաև, համաձայն ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարանների կրթական ծրագրի՝ կրթության բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները, համաձայն որի՝ տարրական կրթության հիմնական նպատակներն են սովորողի՝

1) մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը.

2)լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը.

3) աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը.

4) բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը.

5) բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և

ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը.

6) միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը [Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ , էջ 3]:

Կրթական չափորոշիչը սահմանում է նաև տարրական կրթության ծրագրի «Հայոց լեզու» ուսումնական բնագավառը, որը նպատակաուղղված է՝

1) սովորողի կողմից մայրենի լեզվի տիրապետման անհրաժեշտության ու առաջնայնության, ազգային ինքնության հաստատման ու պահպանման գործում մայրենի լեզվի դերի գիտակցմանը.

2) գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու գործում հայերենի դերի արժևորմանը.

3) մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալու, հայերենով ստեղծված գրական-գեղարվեստական ստեղծագործություններին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու նախնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Մայրենիի դասագրքերում էական տեղ են զբաղեցնում առածներն ու ասացվածքները, շուտասելուկներն ու սուտասելուկները, հանելուկներն ու խաղիկներն [Клюгина 2012, 20–22], հեքիաթները, պատմվածքները, ինչպես նաև բանաստեղծությունները, որոնք յուրովի ունեն արժեքային նշանակություն և ազդեցության տեսանկյունից բազմաբնույթ և բազմաբովանդակ են:

Մայրենիի դասավանդման արժեքային ուղղվածությունը բովանդակում է՝

- Համամարդկային, հումանիստական, ժողովրդավարական, բարոյական, էսթետիկ և այլ արժեքներ ՀՀ հասարակության հենքային ազգային արժեքներ, ժողովուրդների հոգևոր ավանդույթները, մշակութային արժեքները,
- Իրավական, էսթետիկ, ֆիզիկական, էկոլոգիական արժեքներ
- Անձնային որակներ՝ կրթվածություն, հայրենասիրություն, հումանիզմ, բարեգթություն, հանդուրժողականություն
- Անձի որակներ, որոնք պատասխանում են թվային հասարակության պահանջներին, նորարար տնտեսությանը, մշակույթների երկխոսությանը
- Առողջ ապրելակերպին, ընտանիքում առողջ փոխհարաբերություններին [Клюгина 2012, 20–22]:

Արժեքային համակարգի ձևավորման միջառարկայական մակարդակը ենթադրում է հասարակության բազային համամարդկային և ազգային արժեքների յուրացում՝ ինչպիսիք են կյանք, մարդ, գիտելիք, մշակույթ, բնություն, ստեղծագործություն, ճշմարտություն, բարի, գեղեցկություն և այլն: Տվյալ արժեքներին ընտելացումը տեղի է ունենում դասարանական, արտադասարանական և արտադպրոցական միասնության մեջ: Հենքային արժեքներն այսպես ասած ներթափանցում են բոլոր առարկաներ և միջոցառումներ, հարստացնում արժեքները, որոնք գտնվում են այլ մակարդակներում:

Առարկայական մակարդակում նախատեսվում է առարկայական արժեքների յուրացում, ուսումնական առարկայի բովանդակության արժեքային կողմնորոշիչները: Յուրաքանչյուր առարկա ունի առաջատար արժեքայնություն, որով կարող է կողմնորոշվել ուսուցիչը [Клюгина 2012, 20–22]:

Արժեքային համակարգի զարգացումը սովորողների մոտ ՀՀ-ում այսօր առաջնային պայման է, քանի որ լինելով փոքր երկիր, ավելի քան կանգնած ենք ազգային արժեքների և ինքնության պահպանման ճանապարհին:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հետազոտություն մայրենիի դասընթացին

Պարզելու համար, թե որքանով է հնարավոր մայրենի գրքի միջոցով փոխանցել կրտսեր դպրոցական տարիքի երեխային արժեքային կարողունակություններ, որոնք կդառնան նրա հետագա կյանքի ամուր արժեքային համակարգը, մեր կողմից իրականացվել է 4-րդ դասարանի մայրենիի դասագրքի վերլուծություն՝ արժեքային տեսանկյունից, ինչպես նաև կազմել և իրականացվել է փորձարարական դասապրոցես:

4-րդ դասարանի մայրենիի դասագրքի առաջին մասի վերլուծության արդյունքում պարզեցինք, որ առաջին մասը բաղկացած է 2 բաժիններից՝ «Հայաստանի 7 և բյուր հրաշալիքներ», որտեղ գաղափար է տրվում մեր հայ մեծերի գործերի արժեքայնության մասին, հայրենիքի՝ որպես մեծագույն արժեքի մասին: Սովորողը ճանապարհորդում է երաժշտության, կերպարվեստի գրական ստեղծագործությունների կախարդական աշխարհով, դառնում հայ արվեստի անբաժան մասնիկը:

Հաջորդ բաժինը հայրենիքի մասին է՝ «Ա՛յ քեզ բան. Ինչ կա չկա, ինչ երևում չի երևում հայրենիքն է»: Այս բաժինը համեմված է հայրենասիրությամբ, հողի կարոտի կանչով, մայրենի լեզվի արժևորմամբ: Շեշտադրվում է հայ լինելու կարևոր գաղափարը, որտեղ գլխավոր արժեքը միասնության ուժն է, ընտանիքը, օջախը, ուսուցիչը և հավերժ անպարտելիության ՝ Մասիսը:

Այսպիսով, 4-րդ դասարանի մայրենիի դասագիրքը սովորողներին փոխանցում է ազգային ինքնության պահպանման մեծագույն հայրենասիրական արժեքներ, որոնք անգնահատելի են, չունեն չափողականություն:

Մայրենի 4-րդ դասագրքի 1-ին մասի վերլուծության արդյունքում պարզեցինք, որ գիրքը հնարավորություն է ընձեռնում ապահովելու արդյունավետ ուսումնական գործընթաց՝ միաժամանակ շեշտադրելով սովորողների արժեքային համակարգի

զարգացումը, որի նախադրյալները տրվում են նաև ՀՀ հանրակրթական չափորոշիչներում:

Հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները ՀՀ կրթական չափորոշիչներում սահմանվում են կարողունակությունների ձևով, որտեղ կարողունակությունները սահմանվում են որպես՝ սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր:

Հաջորդիվ մեր կողմից կազմվել է փորձարարական դասի պլան: Թեման վերցրել ենք մայրենի լեզվի 4-րդ դասարանի դասագրքից:

Ստորև ներկայացնում ենք դասի պլանը:

Դասարան՝ 4-րդ

Առարկան՝ Մայրենի

Դասագիրքը՝ « Մայրենի 4 », հեղինակներ՝ Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան և այլք.

Թեմատիկ խումբ՝ « Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»

Դասի թեման՝ Անակնկալի սպասումով « Հովհաննես Թումանյանի արձանի մոտ»

Դասի տեսակը՝ նոր նյութի յուրացման դաս

Փուլերը՝ ԽԻԿ համակարգով

ՈՒսումնասիրվող ստեղծագործության գաղափարը՝ «Գնահատենք սեփական մշակույթը և պահպանենք ազգային արժեքները»:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝

«Մտագրոհ», «արժեքների ծառ», «Ընթերցանություն/ամփոփում զույգերով», դերային քննադատական քննարկման խմբեր

Անհրաժեշտ նյութեր՝

- Գրատախտակ
- Կավիճ (մարկեր)
- Կպչուն թղթեր
- Պաստառ՝ «Հ. Թումանյանի ասույթները»:

Դասի նպատակները և խնդիրները՝

1.Ուսումնական՝

- Ձևավորել գեղագիտական լեզվամտածողություն, արտահայտիչ և գեղեցիկ խոսք
- Հարստացնել սովորողների բանավոր խոսքը ազգային արժեքները բնորոշող նոր բառանյութով
- Վերհանել բնագրի իրական խորքային արժեքները
- Սովորեցնել ուսումնասիրվող նյութը այլ առարկաների հետ արժեքայնության տեսանկյունից համադրելուն

2.Դաստիարակչական՝

- դաստիարակել հարգանքի և պատասխանատվության զգացում ազգային արժեքների նկատմամբ
- Ձևավորել փոխօգնության որակներ, հարգանք սեփական մշակույթի նկատմամբ

3.Զարգացնող՝

- զարգացնել արժեքային գիտակցություն
- զարգացնել այլ մշակույթների արժեքների նկատմամբ հանդուրժողականություն

Դասի ավարտին աշակերտները պետք է.

Ա. Իմանան՝

● բնագրի արժեքային նշանակությունը

Բ. Կարողանան՝

● Տարբերակել բնագրի գաղափարը, տեքստի տրամաբանական կառույցը

●Բացատրել փոխաբերական մտքերը

●Վեր հանել բնագրի գրական արժեքայնությունը

●Վերարտադրել գեղարվեստական բառանյութը բանավոր խոսքում

Գ. Տիրապետեն՝

● բնագրում առկա բանաստեղծությունների գրական արժեքայնությանը

● Հ. Թումանյանի խոսքային ոճի արժեքային նշանակությունը:

3

Դասի ընթացքը՝

IԿազմակերպական մաս:

Դասի նկատմամբ հոգեբանամանկավարժական կողմնորոշում

Սովորողների ակտիվացում

II Տնային առաջադրանքի ստուգում.

III. Նախորդ դասի հարցում, նոր նյութի հետ կապակցում

Խթանման փուլ

Մտագրոհ, ուսուցիչը սովորողներին հարցնում է՝ ինչ են պատկերացնում անակնկալ սպասման ներքո. Յուրաքանչյուրը պետք է նշի մեկ իմաստ՝ արտահայտված մեկ բառով: Այս մեթոդի կիրառության մեջ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, նպատակն է սովորողների հետաքրքրության խթանումը և ակտիվացումը:

Ապա առաջարկում է գրատախտակին գծված ծառի ճյուղերին յուրաքանչյուրը գրի իր պատկերացմամբ մեկական արժեք: Նպատակն է դուրս բերել սովորողների նախնական արժեքային պատկերացումները:

Արդյունքում՝ անակնկալ սպասման ներքո երեխաները արտահայտեցին տարբեր կարծիքներ, որոնք հիմնականում կապված էին ծնողների հետ, ինչը խրախուսելի է, քանի որ նրանց կողմից դիտարկվեց ընտանիքը որպես արժեք:

Արժեքների ծառի կառուցման ընթացքում երեխաները հատկապես կարևոր արժեքներ ներկայացրեցին սերը, ընկերությունը, ուսուցիչը, դպրոցը, տունը, լավ սովորելը, լավ մարդ լինելը, մեկը մյուսին օգնելը: Ըստ էության երեխաների արժեքային դիրքորոշումները կապված էին ընտանիքի, դպրոցի և բակի հետ: Այն հիմնական միջավայրերը, որտեղ նրանք լինում են:

Իմաստավորման փուլ:

Ընթերցանություն/ամփոփում զույգերով:

Ա. Սովորողները բաժանվում են զույգերի և կարդում են «Հովհաննես Թումանյանի արձանի մոտ» տեքստը:

Ա. Հովհաննես Թումանյանի արձանի մոտ բնագրի ընթերցում

Հաջորդաբար տեքստից հատվածներ են կարդում բարձրաձայն, ապա ամփոփում են տեքստում ասվածը արժեքային տեսանկյունից, մյուսը տեքստի վերաբերյալ հարցեր է տալիս, որոնց երկուսն էլ փորձում են պատասխանել (հարցերը նախապես կազմվել են ուսուցչի կողմից և տրվել քարտերի ձևով սովորողներին):

Ապա նրանք փոխվում են դերերով և կարդում են տեքստի հաջորդ հատվածը:

1-ին հատվածի տեքստը Հովհաննես Թումանյանի կենսագրության և նրա ստեղծագործական գործունեության մասին է, որի ընթերցումից անմիջապես հետո կատարվում են հետևյալ հարցադրումները՝

Հատված 1

1. Քանի՞ տարի է ապրել Հ. Թումանյանը և ե՞րբ է ծնվել:
2. Արդյո՞ք դեռ մանկուց զգացվել է Թումանյանի հայրենասեր ոգին:
3. Ի՞նչ եք կարծում հայրենիքը սիրելու չափը երևում է նրա ստեղծագործական պարզության մեջ:
4. Արդյո՞ք նոր շունչ է տվել իր պարզ գյուղական բառապաշարով երգերին և խաղիկներին:

Հաջորդ պարբերություններին հաջորդաբար ներկայացվում են տեքստում առկա բանաստեղծությունները և կատարվում հարցադրումներ՝

Հատված 2

2. Ինչու՞ է դպրոցի ճամփան միշտ կարճ և սիրուն: Ի՞նչ եք կարծում կրթությունը մեծագույն արժե՞ք է:

Հատված 3

3. Սևուկ ուլիկ ստեղծագործության մեջ արդյո՞ք երևում է ծնող-երեխա սիրո արժեքայնությունը:

Հատված 4

4. Ո՞ր գիժ ամսի մասին է ասում Թումանյանը:

Հատված 5

5. Ինչո՞ւ է տղան մտածում, որ գրիչը չի սիրում իրեն:

Հատված 6

6. Ինչպիսի՞ն է ուրագը Ինչպիսի՞ն պետք է լինել, որպեսզի չլինել ուրագի պես:

Հատված 7

7. Գեղեցի՞կ է նկարագրում աշունը Թումանյանը, ինչպես է նկարագրում մի քանի բառով բնորոշեք: Ինչո՞ւ են ծաղիկները քնել հողի տակ

Հատված 8

8. Ո՞վ կարող է պատմել՝ ով այնպիսի սուտ ասի հեքիաթի միտքը:

Հատված 9

5. Ինչո՞ւ է գործն անմահ մարդու:

Հատված 10

6. Ինչո՞ւ է ամեն մարդու համար ամենալավ տունը այն խրճիթը, որտեղ նա ապրում է:

Հատված 11.

7. Ո՞վ կարող է ասել Չարի վերջի ուսուցանող միտքը
Ինչո՞ւ են կատուն և շունը միշտ կռվում իրար հետ:

Բ. Բառային աշխատանք:

1. Վերը նշված բանաստեղծություններից դուրս բերել առօրյա խոսակցականում կիառվող կենցաղային բառերը՝

• Սևուկ ուլիկ • Կաթ եմ արել • Գիժ ամիս

- Հանգիստ չի տալիս
- Սուս քնած են
- Ման եկա

Գ. Աշխատանք պատմվածքի գաղափարի շուրջ:

2. Բացատրեք հետևյալ արտահայտությունները

- Մի՛ եղիր ուրագի պես
- Կատուն ճոն էր
- Գդակ չուներ
- Գործն է անմահ
- Դպրոցի ճամփան միշտ կարճ է:

Իմաստավորման փուլի ընթացքում պարզեցինք, որ դասապրոցեսում հնարավոր՝ իրագործել համալիր ուսուցում, տվյալ պահին ուսուցանելով ոչ թե մեկ թեմա, այլ մի քանի ստեղծագործությունների հիմնական գաղափարներ, որոնք առաջնային են, ուղեկցող անձի կայացման գործընթացում:

Ընդ որում մեր կողմից տարբերակվեցին և ներկայացվեցին ընկերություն, ճշմարտախոսություն, փոխօգնություն հիմնական արժեքները և դերը՝

Դ. Ներկայացվող արժեքներ՝

Ընկերություն

6

-Երեխանե՛ր, եկեք ուրագի բանաստեղծության միջոցով փորձենք բացատրել որն է իրական ընկերությունը:

7. Ճշմարտախոսություն

-Շուն ու կատվի ստեղծագործության միջոցով խոսենք սուտ և ճիշտ խոսելու դրական և բացասական կողմերի մասին:

8. Փոխօգնություն

Չարի վերը ստեղծագործության միջոցով փորձենք կարևորել մեկս մյուսին օգնելու գաղափարը:

Կշռադատման փուլ.

Կիրառվում է դերային քննադատական քննարկման խմբեր:

Վերը շարադրված քննադատական հարցերի հիման վրա երեխաներին առաջարկվում է բաժանվել 6 հոգանոց խմբերի և համարներ տալ խմբի ներսում:

1. Կարծու՞մ եք, որ պետք է ճանաչենք մեր հայ գրողներին:
2. Սիրել հայ գրականությունը նշանակո՞ւմ է արդյոք սիրել հայրենիքը:
3. Ի՞նչ է նշանակում քանի լեզու գիտես այնքան մարդ ես:
4. Կցանկանայի՞ք ապրել որևէ այլ երկրում:
5. Ինչու՞ է յուրաքանչյուր մարդու համար կարևոր այն տունը, որտեղ ծնվել է:
6. Եկեք մտածենք և փորձենք մեր կողմից ուսումնասիրված տեքստին դնել նոր վերնագիր:

Քննարկմանը նախորդող դադարի ժամանակ խմբի յուրաքանչյուր համարին առանձին հարց է առաջարկվում, որպեսզի նրանք վարեն քննարկման այն մասը, որը վերաբերում է այդ հարցին:

Տնային հանձնարարություն

Տանը գրել փոքրիկ էսսե ընկերություն թեմայով:

Կշռադատման փուլի միջոցով մեր կողմից ամփոփվեցին հիմնական արդյունքները, սովորողների յուրացման, ընկալման աստիճանը, արժեքային հենքային պատկերացումները:

Ռեֆլեքսիա

1. Որքանո՞վ հաջողվեց ապահովել սպասվելիք վերջնաարդյունքը:
2. Արդյո՞ք դասի պլանը իրատեսական էր նշված ժամանակահատվածի համար
3. Որքանո՞վ հաջողվեց ակտիվացնել երեխաներին
4. Արդյո՞ք վեր հանվեցին տեքստում առկա հիմնական արժեքային բաղադրիչները

Ռեֆլեքսիայի միջոցով ապահովվեց ետադարձ կապ, ինչը թույլ է տալիս ուսուցիչն դուրս բերելու դասի առավելությունները և թերությունները:

Գնահատման տեսանկյունից կիրառվեց խմբային նկարագրական գնահատում, համաձայն որի սովորողները գնահատում են խմբային համագործակցությունը հետևյալ չափանիշներով՝

- Լիարժեք համագործակցեցինք
- Համագործակցեցինք
- Մասնակի համագործակցեցինք
- Աշխատեցինք անհատապես:

Նշենք, որ 20 երեխայից 5 տոկոսը լիարժեք համագործակցեց, 75 տոկոսը համագործակցեց, 15 տոկոսը մասնակի համագործակցեց:

Վերոնշյալը փաստում է այն մասին, որ արժեքային դիրքորոշման փոխանցումը առավել արդյունավետ է խմբային գործունեության ընթացքում:

Դասի ավարտին սովորողներին տրվեց փոքր ռեֆլեքսիվ հարցաթերթիկ՝ պարզելու համար արժեքային կողմնորոշումների կայուն մակարդակը. Հարցերը հետևյալ բնույթի էին:

- Ստեղծագործություններում առկա արժեքները դուրս բերելիս հիմնվեցիք ձեր սեփական կարծիքին թե՞ խմբային:

Արդյունքում հարցմանը մասնակից 20 սովորողներից 35 տոկոսը հիմնվեց սեփական կարծիքին, մյուս 65 տոկոսը խմբային:

35 տոկոս ցուցանիշը խոսում է այն մասին, որ այս երեխաների դիրքորոշումներն արդեն ձևավորված են և ունեն սեփական կարծիք, խրախուսելի է նաև կարողանալ համագործակցելը:

- Ի՞նչ հիմնական արժեքներ քննարկվեցին և դուրս բերվեցին դասի ընթացքում:

Երեխաները նշեցին ճշմարտախոսություն, սեր, հարգանք, կրթություն, ընտանիք, դպրոց, ընկերներ, հարգանք, հայրենիք արժեքները:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից իրականացված փորձարարական դասի հետազոտության արդյունքները, պարզեցինք, որ ակտիվ ուսումնառությամբ մեթոդներով հագեցած դասապրոցեսում հնարավոր է փոխանցել սովորողներին

արժեքային կողմնորոշիչներ, որոնք կնպաստեն անձի կայուն զարգացմանը համաձայն ՀՀ հասարակության արժեքային պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից իրականացված հետազոտության տեսական և գործնական դրույթները՝ հանգեցինք այն եզրակացության որ.

- Սովորողի անձի կայուն զարգացման գործընթացում էական տեղ է զբաղեցնում արժեհամակարգի ձևավորումը, որն արդյունավետորեն իրագործելի է տարրական դպրոցի մայրենիի դասընթացին:

Մեր կողմից իրականացված որակական հետազոտության արդյունքում պարզեցինք, որ.

- մայրենիի դասընթացում ձևավորվում են հայրենասիրության և սիրո զգացում հայրենիքի նկատմամբ, պատասխանատու վերաբերմունք ուսման նկատմամբ, մարդկային կյանքի արժեքները գիտակցելու և ընդունելու կարողություն, բարոյական արժեքների տեսանկյունից սեփական արարքների չափողականություն, հարգանք այլ անձանց արժեքների՝ մշակույթի, ազգության նկատմամբ, կառուցողականություն երկխոսության մեջ, առողջ կենսակերպ, բնապահպան մշակույթ, բարոյական գիտակցություն և կոմպետենտություն սեփական ընտրության կատարման մեջ, հաղորդակցային կոմպետենտություն, ընտանիքի և հասարակության նշանակության գիտակցություն, էսթետիկ գիտակցություն:
- Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմքում նպատակներն են, պահանջմունքները, դրդապատճառները, սահմանումները:
- Արժեքային կողմնորոշումը բարդ սոցիալ-հոգեբանական ֆենոմեն է, որը բնորոշում է անձի ակտիվության ուղղվածությունը և բովանդակությունը, ընդհանուր մոտեցումը աշխարհի և սեփական անձի նկատմամբ, որն իմաստավորում է կրթական ուղղվածությունը, ինքնակատարելագործումը, վարքը, արարքները:

Առաջարկում ենք ուսուցիչներին դպրոցականների հումանիստական ուղղվածության արժեքային կողմնորոշման ձևավորման գործում ցուցաբերել

արժեբանական մոտեցում: Արժեքային կողմնորոշիչների ձևավորման հստակ նպատակայնությունը արտադասարանական, դասարանական, արտադպրոցական միասնության մեջ, թույլ կտա հասնելու շոշափելի արդյունքների կրթության դաստիարակության և սովորողների զարգացման մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջրբաշյան Ա., Քալանթարյան Ժ., Էդոյան Հ. , Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ. -Եր.: ԵՊՀ հրատ., 2016
2. Клюгина О. А. Технология формирования ценностно-смысловой компетентности // Педагогическое образование и наука. – 2012. – № 5.
3. Шемшурина А.И. Аксиологический подход в воспитании школьников // Этическое воспитание. № 2.– 2011.
4. Эрдниев П.М., Эрдниев Б.П. Обучение математике в школе / Укрупнение дидактических единиц. Книга для учителя. 2 изд.М.: АО «Столетие».– 1996
5. Առածների ու ասացվածքների բնագրային և հայերեն թարգմանությունների ոճական արժեքը http://ysu.am/files/06A_Khachatryan.pdf/01/05/2021
6. Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ , էջ 3 Հավելված ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 1088 - Ն որոշման. «Հավելված N 2 ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/07/11_1088.pdf/02/05/2021